ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/80, 07.07.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Արքասիմ» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89» գնանշման հարցում

Գնման առարկան՝ կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89» ծածկագրով ընթացակարգի մրցույթում «Արքասիմ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը համարել հրավերի պայմաններին համապատասխանող:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ Ֆինանսների նախարարություն
Գնումների բողոքարկման խորհրդին

ԱՐՔԱՍԻՄ ՍՊԸ տնօրեն
Վարդան Սիմոնյանից
Ք Երևան, Դավթաշեն 7-րդ փողոց 1/14
Հեռախոս 098089780

Գնման ընթացակարգի ծածկագիր ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-20/89

Պատվիրատու՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ԲՈՂՈՔ

(ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-20/89 ծածկագրով ընթացակարգի պայմանագրի կնքման մասին հայտարարության վերաբերյալ)

Հայտնում եմ Ձեզ, որ սույն թվականի հունիսի 16-ին <<ԱՐՔԱՍԻՄ>>ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-20/89 գնման ընթացակարգով մրցույթի 4-րդ չափաբաժնին և ներկայացրել է նվազագույն գնառաջարկ:

Սույն թվականի հուլիսի 2-ին մրցույթի հանձնաժողովի կողմից հրապարակվել է հայտարարություն համաձայն որի մրցույթում հաղթող է ճանաչվել ԱՁ Արինա Պողոսյանը, իսկ <<ԱՐՔԱՍԻՄ>>ՍՊԸ ներկայացրած հայտը համարվել է որպես հրավերի պահանջներին չհամապատասխանող: Հեռախոսակապի միջոցով կապ եմ հաստատել հանձնաժողովի քարտուղարի հետ և տեղեկացել, որ ներկայացված հայտի նախահաշվում ներառված է եղել տող <<Սարքավորումներ՝ 0,1198%>>, որը ես ջնջել եմ հայտից, քանի որ այդ տողով ծախս չէի նախատեսում: Ինձ բանավոր տեղեկացրել են, որ պետք է այդ տողը պարտադիր ներառեի և ավելացների այդ տոկոսի չափով գումար: Այսինքն ես չեմ ցանկացել արհեստականորեն ծանրաբեռնել նախահաշիվը և ավելացնել աշխատանքների կատարման ծախսերը, մինչդեռ հանձնաժողովը գտել է, որ պարտավոր էի ավելի շատ ծախս նախատեսել: Արդյունքում ներկայացված հայտը համարվել է հրավերին անհամապատասխան և հաղթող է ճանաչվել շուրջ մեկ միլիոն դրամ ավել գումարով հայտ ներկայացրած անձը:

Գտնում եմ, որ <<ԱՐՔԱՍԻՄ>>ՍՊԸ-ի հայտը պետք է համարվի մրցույթին համապատասխանող, քանի որ նշված թերությունը որևէ կերպ չի ազդել որևէ պայմանի, գնի ավելացման և կամ այլ հանգամանքների վրա:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենքի 46, 50 հոդվածներով:

Խնդրում եմ՝

ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-20/89 ծածկագրով ընթացակարգի մրցույթում <<ԱՐՔԱՍԻՄ>>ՍՊԸ -ի ներկայացրած հայտը համարել հրավերի պայմաններին համապատասխանող:

Կից ներկայացնում եմ անձնագրիս պատճեն, պետական տուրքի վճարման անդորրագիրը

Դիմող <<ԱՐՔԱՍԻՄ>>ՍՊԸ
տնօրեն Վարդան Սիմոնյան

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱ
ՄՈՒՏՔ
Մուտքագրման N 1-26009-ω
«07» 07 20.